Արձանագրություն 3

ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30.08.19թ.

ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Թամարա Միրզախանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Վանիկ Վանցյան/գնահատող/

Նարեկ Առաքելյան/գնահատող/

Մարինե Ավագյան /բացող/

Արմենուհի Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Թ.Միրզախանյան)

1.1 «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխնությունների մասին

(Թ.Միրզախանյան)

2.1 «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Ներկայացված 26.11.2018թ ՀՀ ԳԱԱ <<Երկրաբանական գիտությունների ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի հետ կնքված թիվ Մ_1126 պայմանագիրը թերի է, քանի որ բացակայում է պայմանագրում նշված և անբաժանելի մասը համարվող թիվ 2 և 3 հավելվածները: Պայմանագիրը և դրան առնչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

- Ներկայացված 09.10.2018թ ՄԱԿ-ի ԶԾ-ի ՕԻԱՀ-ի հետ կնքված թիվ UNDP/ARM10/MP/2018/ESIC պայմանագիրը թերի է, քանի որ բացակայում է պայմանագրում նշված և բաղկացուցիչ մասը համարվող փաստաթղթերը: Պայմանագիրը և դրան առընչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

- Ներկայացված 27.06.2018թ ՄԱԿ-ի ՋԾ-ի ՕԻԱՀ-ի հետ կնքված թիվ ARM-00000007505 գնման պատվերը և դրան առնչվող փաստաթուղթը (հանձման-ընդունման ակտը) հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

- Ներկայացված 28.10.2016թ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ կնքված թիվ ARM 03, 2016 պայմանագիրը թերի է, քանի որ բացակայում է պայմանագրում նշված և անբաժանելի մասը համարվող հավելվածները, ինչը հնարավորություն չի տալիս պայմանագիրը որպես նմանատիպ գնահատելու համար: Չեն ներկայացվել նաև նշված պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի /հանձման-ընդունման ակտերի/ պատճենները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Պայմանագիրը և դրան առընչվող փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (սույն ընթացակարգի հրավերի 7.22 կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետ):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ սեպտեմբերի 5-ին, ժամը՝ 11:00 -ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Թամարա Միրզախանյան //նախագահ/

_____ Վանիկ Վանցյան

_____ Նարեկ Առաքելյան

_____ Մարինե Ավագյան

_____ Արմենուհի Պետրոսյան

_____ Ա. Սիմոնյան/քարտուղար/

Արձանագրություն 4

ՍՊԳՀԾՁԲ-19/34 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05.09.19թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Թամարա Միրզախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Վանիկ Վանցյան /գնահատող/
Նարեկ Առաքելյան/գնահատող/
Մարինե Ավագյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

Բացակայում էր՝ Արմենուհի Պետրոսյան /բացող/

1. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին
(Թ.Միրզախանյան)

1.1 «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ 28.10.2016թ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ կնքված թիվ ARM 03, 2016 պայմանագրի, քանի որ չեն ներկայացվել վերջինիս կողմերի հաստատած՝ պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի /հանձման-ընդունման ակտերի/ պատճեները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Սակայն առկա փաստաթղթերով վերջինս ապահովել է հրավերով սահմանված որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջները:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

1.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

1.4 Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Թ. Միրզախանյան /նախագահ/

_____ Վ.Վանցյան

_____ Ն. Առաքելյան

_____ Մ.Ավագյան

_____ Ա. Սիմոնյան/քարտուղար/